« Լավ գաղափարները վերածել սթարթ-ափների» 2022 տարածաշրջանային մրցույթը կընթանա երեք փուլով.

- 1-ին փուլ - Դիմումների ընդունման տարածաշրջանային հրավերի շրջանակներում ՖՀԳ ԿԱԵ-ի գրասենյակի անդամ բուհերի ֆրանսախոս ուսանողների միջավայրում գտնել համապատասխան, նոր և եզակի գաղափար՝ թիմով ներկայացնելու համար , ոչ ուշ, քան 2022 թ. փետրվարի 15-ը:

- **Ուղարկել առաջարկ**. նորարարական երիտասարդ ձեռնարկություն ստեղծելու գաղափարի մի քանի տողից (500 բառ/մեկ էջ) բաղկացած ամփոփում, հատկապես նորագույն տեխնոլոգիաների ոլորտում : Դա կարող է լինել միաժամանակ տեխնոլոգիական սթարթ-ափ, ինչպես նաև տեխնոլոգիան այլ ոլորտների հետ համակցելու հնարավորություն՝ նոր ծառայություններ կամ արտադրանք առաջարկելու նպատակով (օր.՝ համակցել «ֆինանսները» և «տեխնոլոգիան») . մի նորարարական սթարթ-ափ , որը կօգտագործի տեխնոլոգիան ֆինանսական և բանկային ծառայությունների ոլորտներում: Մրցույթը վերաբերում է կրթական բոլոր բնագավառներին:

- **Ձևավորել թիմը**. բազմամասնագիտական թիմը, որը պետք է բաղկացած լինի առավելագույնը 5 ֆրանկոֆոն ուսանողից, կարող է ներկայացնել մեկ փաթեթ/հայտ սույն մրցույթի շրջանակներում: Ուսանողները խմբերը կարող են կազմել ազատ կերպով:

-2-րդ փուլ. թիմերի / ուսանողների հետ իրենց տեխնոլոգիական սթարթ-ափի կառուցման հինգ ամսվա ընթացքում (2022թ. փետրվար-հունիս) կաշխատեն ոլորտի պրոֆեսիոնալները:

- **3-րդ փուլ**, վերջնական փուլ. մրցույթի ամփոփումը տեղի կունենա Բուխարեստում՝ 2022 թվականի հուլիսին և կտևի 5 օր, որի ընթացքում կլինեն նաև վերապատրաստումներ և մասնագիտական խորհրդատվություն (coaching) : Ամփոփման շրջանակներում տարածաշրջանային լավագույն նախագծերը կներկայացվեն ժյուրիին Բուխարեստում: Կտրամադրվի գումարային և նյութական 4 մրցանակ, որից 3-ը՝ ժյուրիի կողմից և 1-ը՝ արտաքին միջավայրից :